



ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



Նորին Ամենապատուութիւն
Տ. Եղիշէ Արքեպիսկոպոսին
Պատրիարքին Հայոց Երուսաղէմի
Երուսաղէմ

«Բրիստոս յարեաւ ի մեռելոց, ձեզ եւ մեզ մեծ աւետիս»:
Սուրբ Յարութեան աւետիսը նոր լոյս կ'իջեցնէ մեր օրերու
յուսացեալ աշխարհին վրայ, մեր եկեղեցիին վրայ, ամենուս հո-
գիներէն ներս:

Ազատ ու պայծառ թող շողայ լոյսը Յարութեան: Մար-
գիկ եւ ժողովուրդներ, իրենց մտածումներն ու ձեռաց գործերը
թող այդ լոյսով շաղախեն, բիրեղացնեն, ի փառս Ամենակալին
եւ ի փառս Մարդուն: Յարութեան լոյսով թող առաջնորդուին
նաեւ պետութիւնները, հասնելու համար իրական խաղաղութեան
եւ արդարութեան ափին:

Այսօր Սուրբ Յարութեան լոյս կը բերենք Ձեզի յաւիտե-
նական Սուրբ Էջմիածնէն, սրտագին մաղթանքով որ Փրկիչը մեր
Բրիստոս անասան պահպանէ Հայոց Մայր եկեղեցին եւ համայն
ժողովուրդը, հոգեշէն եւ ազգանուէր գործոց առատ պտղաւո-
րումով:

Բարի մաղթանքներ Ձերդ Ամենապատուութեան, Ձեր Ս.
Աթոռոյն ուխտապահ Միաբանութեան եւ համայն մեր հաւատա-
ւոր գաւակներուն, ի պայծառութիւն եւ յանաւան միութիւն
մեր Առաքելական Սուրբ եկեղեցւոյն:

Արդ, Սուրբ Յարութեան շնորհներով *«ազատացեալք ի մե-
ղացն, եւ ծառայեալք Աստուծոյ, ունիք զպտուղ ձեր ի սրբութիւն
եւ վախճան նորա կեանք յաւիտենից: Զի թողակն մեղաց մահ է.
այլ չնորհք Աստուծոյ կեանք յաւիտենից ի Բրիստոս Յիսուս ի
Տէր Մեր»* (Հռոմ. 2, 22-23):

Խնդրեալք եւ սիրոյ ողջունիւ՝

ՎԱԶԳԷՆ Ա.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
30 Մարտի 1968